ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

օգոստոսի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի №171Ա ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի №92Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 8-ի №20 գրությունը, ինչպես նաև գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) շահագործման նպատակով տրամադրված 2021 թվականի մայիսի 25-ի №0210-21 ջրօգտագործման թույլտվությունը, որում նշված Կայանի ջրառի ելքի մեծությունը, ջրառի և ջրահեռացման նիշերը տարբերվում են 2006 թվականի հուլիսի 25-ի Կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-80 և 2005 թվականի մարտի 4-ի «ՋՐԱՐԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձաքննական եզրակացություններում նշված Կայանի հաշվարկային ելքի մեծության, Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերից՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի օգոստոսի 11-ի «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №171Ա որոշմամբ «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությանը տրամադրված «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0214 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2021 թվականի օգոստոսի 11-ը» բառերը փոխարինել «մինչև 2036 թվականի օգոստոսի 11-ը» բառերով,

2) «Նալբանդի ոռոգման մեծ ջրանցքի վրա» բառերը փոխարինել «Չիչխան գետի Նալբանդի ոռոգման ջրանցքի վրա» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հուլիսի 30-ի «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №92Ա որոշման 1-ին կետում «Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում (գյուղ Շիրակամուտ)» բառերը փոխարինել «Նոր Խաչակապ և Արջուտ համայնքների վարչական տարածքներում» բառերով, իսկ որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Շիրակամուտ համայնքի վարչական տարածքն է (գյուղ Շիրակամուտ)» բառերը փոխարինել «Նոր Խաչակապ և Արջուտ համայնքների վարչական տարածքներն են» բառերով:

3. Պարտավորեցնել Ընկերությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվում է 2021 թվականի օգոստոսի 11-ին,

2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 11-ից, բացառությամբ որոշման 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով Ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
օգոստոսի 2021թ.